

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

Գրադարանների և գրադարանային գործի մասին

ԳԼՈՒԽ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է գրադարանների ստեղծման, գործունեության կազմակերպման և ֆինանսավորման հարաբերությունները, ինչպես նաև սահմանում է գրադարանների տեսակները, գործառույթները, գրադարանային հավաքածուների հաշվառման, համալրման, պահպանության և հանրային գրադարանի հավատարմագրման կարգը, գրադարանների և գրադարաններից օգտվողների իրավունքներն ու պարտականությունները և ապահովում գրադարանային գործի զարգացման իրավական հիմքերը:

Հոդված 2. Գրադարանների և գրադարանային գործի մասին Հայաստանի Հանրապետության իրավական ակտերը

1. Հայաստանի Հանրապետության գրադարանների և գրադարանային գործի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից, սույն օրենքից, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներից ու իրավական ակտերից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերից:

2. Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված է սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 3. Օրենքի գործողության ոլորտը

1. Սույն օրենքի գործողությունը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող գրադարանների վրա՝ անկախ դրանց ստեղծման կարգից, ֆինանսավորման աղբյուրից, գործունեության բնույթից և իրավական կարգավիճակից:

Հոդված 4. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում գործածվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

1) **գրադարան**՝ տեղեկատվական, մշակութային, գիտական և կրթական գործունեություն իրականացնող կազմակերպություն, որն ունի համակարգված հավաքածու, ինչը տրամադրում է ֆիզիկական և իրավաբանական անձանց ժամանակավոր օգտագործման համար,

2) **գրադարանային գործ**՝ տեղեկատվական, մշակութային, գիտական և կրթական ոլորտ, որը ներառում է գրադարանային համակարգի ստեղծումն ու զարգացումը, հավաքածուների ձևավորումը, մշակումը և պահպանումը գրադարանից օգտվողների գրադարանային-տեղեկատվական ու մատենագիտական սպասարկման կազմակերպումը, գրադարանային կադրերի վերապատրաստումը, ինչպես նաև գրադարանների զարգացման գիտամեթոդական գործունեության ապահովումը,

3) **Հայաստանի ազգային գրադարան**՝ Համաշխարհային և ազգային մշակութային ժառանգության կենտրոն, որը հանրային գրադարան է՝ մշակութային, կրթական, գիտա-տեղեկատվական կազմակերպություն, հանդիսանում է հայկական տպագիր արտադրյալների և լեզվի տարածման ոլորտի հետ կապված նյութերի մշտական հավաքող, պահպանող, գրադարանագիտության, մատենագիտության մեթոդական և գիտահետազոտական աշխատանքները համակարգող,

հայկական տպագիր ժառանգության հավաքածուները հաշվառող (անկախ դրանց տեղակայման վայրից), որն իրականացնում է սույն օրենքի 9-րդ հոդվածով սահմանված գործառնությունները,

4) գրադարանային համակարգ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող գրադարանները՝ անկախ սեփականության ձևից, հավաքածուի կազմից, կիրառական նշանակությունից և կամավորության սկզբունքով կապված են համագործակցությամբ ու տեղեկատվական պաշարների միասնական օգտագործմամբ,

5) գրավոր հուշարձան՝ հնատիպ և հազվագյուտ գրքեր, տպագիր հրատարակություններ, որոնք ունեն բացառիկ հոգևոր և նյութական արժեք, հատուկ պատմական, գիտական, մշակութային նշանակություն: Դրանց նկատմամբ սահմանվում է հաշվառման, պահպանության և օգտագործման հատուկ կանոնակարգ (ռեժիմ),

6) Հայաստանի Հանրապետության գրադարանային հավաքածու՝ գրադարանային համակարգի մեջ միավորված գրադարանների հավաքածուներ,

7) ազգային գրադարանային հավաքածու՝ ՀՀ գրադարանային հավաքածուի բաղկացուցիչ մաս՝ գրավոր հուշարձաններ և պարտադիր օրինակներ, որն ունի առանձնահատուկ պատմական, գիտական, մշակութային նշանակություն և նախատեսված է հանրային օգտագործման համար ու մշտապես պահպանվում է պետության կողմից,

8) գրադարանային հավաքածու՝ տեղեկատվական նյութական տարբեր կրիչների ամբողջություն,

9) հանրային գրադարան՝ սույն օրենքով սահմանված կարգով կարգավիճակ ստացած գրադարան, որը ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրում է գրադարանային հավաքածուներն ու ծառայությունները առանց սահմանափակումների, ինչպես նաև իրականացնում է սույն օրենքի 7-րդ և 8-րդ հոդվածներով սահմանված գործառնությունները,

10) գրադարանից օգտվող՝ գրադարանի ծառայություններից օգտվող ֆիզիկական կամ իրավաբանական անձ,

11) գրադարանային փաստաթուղթ՝ ելից տեղեկույթ ունեցող՝ պահպանության, հանրային օգտագործման, փոխանցման ենթակա տեքստային, թվանշանային, պատկերային, տեսա և (կամ) ձայնաշարային կամ համակցված նյութ պարունակող կրիչ,

12) համահավաք գրացուցակ (*պետական գրացուցակ*)՝ մատենագիտական գրառումների ամբողջություն, որը ներառում է գրադարանային հավաքածուների կազմը և բովանդակությունը:

13) տեղեկատվական պաշարներ՝ գրադարաններում, արխիվներում հավաքված փաստաթղթերի ամբողջություն,

14) գրադարանի գլխավոր մատյան՝ գրադարանային հավաքածուների հաշվառման փաստաթուղթ, որը պարունակում է հիմնական տվյալներ գրադարանային հավաքածուի մասին և պարտադիր է բոլոր գրադարանների համար,

15) գրադարանային փաստաթղթի հաշվառում՝ նյութական բոլոր տեսակի կրիչների գրանցում գրադարանի գլխավոր մատյանում,

16) գրադարանային փաստաթղթի պահպանում՝ նպաստավոր պայմանների ստեղծում գրադարանային հավաքածուների ամբողջության ապահովման, ամրակայման և վերականգնման համար,

17) գրադարանային փաստաթղթի պաշտպանում՝ գրադարանային հավաքածուների պաշտպանում բոլոր տեսակի ռիսկերից,

18) գրադարանի տեղեկատու-որոնողական համակարգ՝ տեղեկույթի ավտոմատացված տվյալների շտեմարան՝ տեղեկատու և մատենագիտական հրատարակությունների քարտային և էլեկտրոնային գրացուցակ,

19) ազգային մատենագիտություն՝ գրադարանային հավաքածուի տվյալների համապարփակ ամբողջություն,

20) գրադարանների խորհուրդ՝ հասարակական հիմունքներով գործող խորհրդատվական մարմին, որը նպաստում է գրադարանների զարգացմանը և համագործակցությանը, ձևավորում է առաջարկություններ՝ դրանց գործունեությանը նպաստող պետական ռազմավարության ծրագրերի մշակման համար,

21) միջգրադարանային բաժնույթ՝ գրադարանային ծառայության տեսակ՝ հիմնված գրադարանային հավաքածուների փոխօգտագործման վրա:

ԳԼՈՒԽ 2.

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հոդված 5. Գրադարանների ստեղծումը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում գրադարանները ստեղծվում և գործում են սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

2. Գրադարանները կարող են հիմնադրվել Հայաստանի Հանրապետության Կառավարության, տեղական ինքնակառավարման մարմինների, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից:

Հոդված 6. Գրադարանների տեսակները

1. Գրադարանային համակարգը ներառում է բոլոր գրադարանները՝ ըստ սեփականության ձևի, տարածքային բաժանման և բնույթի:

1) Ըստ սեփականության ձևի՝ գրադարանները լինում են՝

ա. պետական գրադարաններ՝ հիմնադրված Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից,

բ. համայնքային գրադարաններ՝ հիմնադրված տեղական ինքնակառավարման մարմինների կողմից,

գ. ոչ պետական գրադարաններ՝ հիմնադրված ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև քաղաքական, կրոնական և հասարակական կազմակերպությունների կողմից:

2) Ըստ տարածքային բաժանման՝ գրադարանները լինում են՝

ա. հանրապետական՝ այդ թվում նաև ազգային համապարփակ, հատուկ և մասնագիտացված գրադարաններ, որոնք ամբողջացնում են գիտության, տեխնիկայի կամ արվեստի որևէ ճյուղի տեղեկատվական պաշարները,

բ. մարզային՝ ապահովում է մարզի բնակչության գրադարանային-տեղեկատվական մատչելիությունը, համալրում է գրադարանային տեղեկույթի էլեկտրոնային շտեմարանը, օգտվում է ցանցի հնարավորություններից, ապահովում է մարզի կազմակերպությունների գրադարանային ծառայության մեթոդական, մասնագիտական և տեղեկատվական ծառայությունը,

գ. համայնքային՝ ապահովում է համայնքի բնակչության գրադարանային-տեղեկատվական մատչելիությունը, համալրում է գրադարանային հավաքածուն հանրապետական, մարզային, տեղական տեղեկույթ կրող համապատասխան նյութական կրիչով, ինչպես նաև էլեկտրոնային շտեմարանի միջոցով իրականացնում է դրանց պահպանումը:

3) Ըստ բնույթի՝ գրադարանները լինում են՝

ա. մասնագիտացված՝ իրականացնում են գիտության և մշակույթի որևէ ճյուղի ազգային և օտարերկրյա տպագիր արտադրանքի ու տեղեկատվական պաշարների համակարգված համալրումը, պահպանումը, մատչելիության ապահովմանն ողջված ծառայությունների մատուցումը,

բ. կրթական՝ գործում են ուսումնական հաստատությունների կառուցվածքում և դրանց բնույթին համապատասխան ձևավորում են հավաքածուներ, մասնակցում ուսումնական ու գիտահետազոտական գործընթացներին, ապահովում են դասախոսների, ուսանողների, գիտական աշխատողների, մասնագետների և այլ անձանց գրադարանային-տեղեկատվական սպասարկումը,

գ. այլ գրադարաններ՝ հասարակական, ինչպես նաև օտարերկրյա իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից հիմնադրված միջազգային կազմակերպությունների, թանգարանների, արխիվների, հրատարակչությունների, առողջապահական կազմակերպությունների, եկեղեցիների, ազատագրկման վայրերի և հատուկ փաստաթղթերի հետ աշխատող գրադարաններ:

Հոդված 7. Գրադարանի պարտադիր գործառույթները

1. Գրադարանը իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) հավաքում, կազմակերպում, պահպանում և օգտագործման են տրամադրում գրադարանային փաստաթղթեր, դրանց վերաբերյալ և այլ բնույթի տեղեկույթ,

2) ցուցակագրում, դասակարգում և կազմում է գրադարանի հավաքածուի գրացուցակ և մատենագիտություն,

3) ապահովում է գրադարանի հավաքածուի և տեղեկատվական համակարգերի մատչելիությունը՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի,

4) ապահովում է գրադարանից օգտվողների որակյալ ծառայությունների մատուցումը,

5) նպաստում է կրթությանը, խթանում է ընթերցանությանը, ինքնակրթությանը և քաղաքացիների սոցիալական հաղորդակցման գործընթացներին,

6) տրամադրում է գրադարանի հավաքածուի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկույթ՝ Հայաստանի Հանրապետության գրադարանային հավաքածուի պետական գրացուցակի համար,

7) ապահովում է գրադարանային հավաքածուում գտնվող գրավոր հուշարձանների պահպանումը և վերականգնումը,

8) ներդնում է նոր տեղեկատվական տեխնոլոգիաներ:

Հոդված 8. Հանրային գրադարանի հավատարմագրումը և կարգավիճակը

1. Գրադարանը կարող է հավատարմագրվել և ստանալ հանրային գրադարանի կարգավիճակ Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից սահմանված կարգով:

2. Սույն օրենքով սահմանված կարգով հանրային գրադարանի կարգավիճակը տրվում է հինգ տարի ժամկետով, ինչի վերաբերյալ լիազորված պետական մարմինը տալիս է համապատասխան վկայական: Վկայականի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:

3. Գրադարանը ենթակա է հավատարմագրման, եթե համապատասխանում է հետևյալ պահանջներին՝

1) ունի իրավաբանական անձի կարգավիճակ,

2) ունի տպագիր արտադրանքի և այլ տեսակի փաստաթղթերի դասակարգված հավաքածու (իրականացվել է հաշվառում, ստեղծվել է գրադարանի տեղեկատվական համակարգը),

3) ունի պահպանության, հավաքածուների դասակարգման և գրադարանի գործունեության համար համապատասխան տարածք, գույք,

4) ապահովված է մշտական ֆինանսավորմամբ,

5) ունի որակավորված մասնագետներ,

6) գրադարանից օգտվողներին մատուցում է գրադարանային ծառայություններ՝ անկախ նրանց սեռից, տարիքից, ռասայից, կրոնական դավանանքից, ազգությունից, ֆիզիկական վիճակից, բնակության վայրից, գտնվելու վայրից և այլ գործոններից, ինչպես նաև ապահովում է սպասարկման այլ միջոցներ ֆիզիկական սահմանափակումներ ունեցող անձանց համար,

7) օգտվում է միջգրադարանային բաժնութային համակարգից:

4. Հանրային գրադարանի կարգավիճակ ստանալու դեպքում գրադարանը կարող է օգտվել.

1) գրադարանի հավաքածուների համալրման ծրագրից.

2) գրադարանի աշխատողների պետական վերապատրաստման ծրագրից և մեթոդական օգնությունից.

3) գրադարանային տեղեկույթի էլեկտրոնային միասնական շտեմարանին միանալու իրավունքից.

4) պետական աջակցության այլ աղբյուրներից:

5. Սույն հոդվածի 3-րդ մասի պահանջներին չհամապատասխանելը հիմք է հանրային գրադարանի կարգավիճակի մերժման համար, որը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

6. Սույն հոդվածով նախատեսված նպատակների և կանոնադրական խնդիրների լուծման համար հանրային գրադարանը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության առանձին տեսակներ՝ հիմնադրի որոշմամբ:

7. Պետական և համայնքային հանրային գրադարանների շենքերը և զբաղեցրած տարածքները հասարակական կամ պետական կարիքների համար կարող են օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ օրենքով:

Հոդված 9. Հայաստանի ազգային գրադարանը

1. Հայաստանի ազգային գրադարանը հանրային գրադարան է: Հայաստանի Հանրապետությունում գրադարանագիտության, մատենագիտության, գրքագիտության գիտահետազոտական և տպագիր արտադրանքի վերականգնման կենտրոնն է:

2. Հայաստանի ազգային գրադարանը ունի խորհրդակցական մարմին՝ գիտական խորհուրդ, որի գործառույթները սահմանվում են կանոնադրությամբ:

3. Հայաստանի ազգային գրադարանը՝

1) հավաքում, ձևավորում, պահպանում է գրավոր ժառանգության պատմական հիշողությունը, ունի համապարփակ, լիակատար, հայատառ և Հայաստանի մասին այլ լեզուներով գրադարանային հավաքածու, հայրենական և արտասահմանյան գրադարանային փաստաթղթերը, ինչպես նաև փաստաթղթերի պարտադիր օրինակը,

2) իրականացնում է միջազգային միջգրադարանային բաժնույթի ծառայությունները և օժանդակում է գրադարաններին՝ կազմակերպելու դրանք,

3) իրականացնում է Հայաստանի Հանրապետության գրադարանային հավաքածուի մասին տեղեկույթի տարածում Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և նրա սահմաններից դուրս,

4) իրականացնում է Հայաստանի Հանրապետության գրադարանների մատենագիտական գրացուցակների համակարգում և ձևավորում է միասնական մատենագիտական համահավաք գրացուցակ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով,

5) ապահովում է խորհրդատվական և գիտահետազոտական աշխատանքների իրականացումը,

6) իրականացնում է հայ տպագիր գրքի, մամուլի և հայագիտական հրապարակումների մատենագիտության ցանկերի կազմումը, հրատարակումը, փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակի պատրաստումը և օգտվողներին տրամադրումը «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով,

7) ապահովում է ֆիզիկապես մաշված, եզակի և (կամ) հազվագյուտ գրավոր հուշարձանների, գրադարանային փաստաթղթերի ամրակայումը և վերականգնումը.

8) իրականացնում է վերահսկողություն Հայաստանի Հանրապետության տարածքում գրավոր հուշարձան համարվող գրադարանային փաստաթղթերի պահպանության և պաշտպանության նկատմամբ՝ անկախ նրանց սեփականության ձևից

9) ձևավորում է համապարփակ նշանակություն ունեցող միջգրադարանային գրքափոխանակության հավաքածու, որի ձևավորման և օգտագործման կարգը սահմանում է պետական լիազորված մարմինը

10) կազմակերպում և իրականացնում է գրադարանային կադրերի վերապատրաստումը՝ արդի պահանջներին համապատասխան,

11) կազմակերպում և համակարգում է հայաստան գրադարանային հավաքածուի թվանշանային տարբերակը (թվանշանային գրադարանը) ՀՀ կառավարության սահմանած կարգով,

4. Արգելվում է Հայաստանի ազգային գրադարանի սեփականության ձևի և բնույթի փոփոխումը, շենքերի և զբաղեցրած տարածքների օտարումը:

ԳԼՈՒԽ 3.

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ԶԱՎԱԴՐՈՒՄԸ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐՈՒՄԸ, ՀԱՇՎԱՐՈՒՄԸ, ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 10. Ազգային գրադարանային հավաքածուի ձևավորման, օգտագործման պայմանները

1. Ազգային գրադարանային հավաքածուի կազմում ընդգրկվում են գրավոր հուշարձանները, փաստաթղթի պարտադիր օրինակը և փորձաքննությամբ արժևորված փաստաթղթերը: Փաստաթղթերը արժևորելու, ազգային գրադարանային հավաքածուի կազմում ընդգրկելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Ազգային գրադարանային հավաքածուի գրացուցակում կարող են ընդգրկվել իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականություն հանդիսացող գրավոր հուշարձանները սեփականատիրոջ գրավոր համաձայնությամբ՝ նրա և լիազորված պետական մարմնի միջև կնքված պայմանագրի հիման վրա: Գրացուցակը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Ազգային գրադարանային հավաքածուների կազմում ընդգրկված գրադարանային փաստաթղթերը ենթակա չեն մասնավորեցման (սեփականաշնորհման), վաճառքի, փոխանակության, նվիրատվության, ինչպես նաև չեն կարող հանդիսանալ այլ գործարքի առարկա:

4. Ազգային գրադարանային հավաքածուի՝ պետական սեփականություն հանդիսացող հավաքածուները ամրացվում են գրադարանին մշտական, անհատույց օգտագործման իրավունքով:

5. Ազգային գրադարանային հավաքածուին վերաբերող փաստաթղթերի պահպանության, օգտագործման և երկարաժամկետ պահպանվածության ապահովումը իրականացվում է գրադարանների, արխիվների, թանգարանների և ազգային հավաքածուներ ունեցող այլ կազմակերպությունների ու հաստատությունների միջոցով:

6. Ազգային գրադարանային հավաքածուի հաշվառման, պահպանության, վերականգնման և օգտագործման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7. Արտակարգ իրավիճակում ազգային գրադարանային հավաքածուի տարհանման և պաշտպանության կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 11. Գրադարանային հավաքածուների համալրումը, հաշվառումը, պահպանությունը, պաշտպանությունը և մատչելիությունը

1. Պետական սեփականություն հանդիսացող գրադարանային հավաքածուները գրադարաններին ամրացվում են մշտական և անհատույց օգտագործման իրավունքով:

2. Հայաստանի Հանրապետության գրադարանային հավաքածուներում ընդգրկված գրադարանային փաստաթղթերը ենթակա են գրանցման գլխավոր մատյանում՝ անկախ դրանց սեփականության իրավունքից և պահպանության վայրից: Գրադարանի հավաքածուների հաշվառման, պահպանման, վերականգնման ու ամրակայման (կոնսերվացման) , ինչպես նաև գրադարանների հավաքածուների հաշվառման գլխավոր մատյանի վարման կարգը հաստատում է լիազոր պետական մարմինը:

3. Գրադարանների հավաքածուների համալրման կարևորագույն սկզբունքը՝ անընդհատությունն է: Գրադարանը գնման, նվիրատվության, ժառանգության կամ փոխանակման պայմանագրերով կարող է ձեռք բերել ցանկացած նյութական կրիչ՝ ապահովելով գրադարանից օգտվողների պահանջարկը համալրվող նյութական կրիչի բովանդակությամբ, լեզվի, տեսակի բազմազանությամբ:

4. Հայաստանի Հանրապետության գրադարանային հավաքածուի՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականություն համարվող գրադարանային փաստաթղթերը սույն օրենքով սահմանված կարգով պահպանում են դրանց սեփականատերերը: Գրադարաններին փաստաթղթերը ժամանակավոր պահպանության կարող են հանձնվել պայմանագրի հիման վրա:

5. Գրադարանային հավաքածուները գրադարանների կողմից վերցվում են մշտական պահպանության, որը ներառում է անվտանգ պահպանության ապահովում և վերականգնման աշխատանքների իրականացում:

6. Գրադարանային հավաքածուների կազմում ընդգրկված նյութական բոլոր տեսակի կրիչները անվճար, ժամանակավոր օգտագործման նպատակով տրամադրվում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց:

7. Գրադարանային հավաքածուները մատչելի են հանրության բոլոր շերտերի համար:

8. Գրադարանային հավաքածուների մատչելիությունն իրականացվում է՝

1) գրադարանային հավաքածուի կազմում ընդգրկված նյութական կրիչի առկայության վերաբերյալ տեղեկությի, դրա աղբյուրների որոնման և ընտրության վերաբերյալ խորհրդատվության տրամադրմամբ, այդ թվում՝ տեղեկատու-որոնողական համակարգի միջոցով,

2) միջգրադարանային բաժնույթի միջոցով:

9. Գրադարանային հավաքածուների մատչելիության սահմանափակումը գրաքննություն կատարելու նպատակով արգելվում է:

10. Գրադարանային հավաքածուի սեփականատերը հավաքածուի մատչելիության վերաբերյալ կարող է սահմանել սահմանափակումներ միայն՝

- 1) ֆիզիկական պահպանվածության ոչ բավարար վիճակի,
- 2) վերականգնման ընթացքում գտնվելու,
- 3) այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված դեպքերում:

ԳԼՈՒԽ 4.

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ԼԻԱԶՈՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ, ՏԵՐԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 12. Գրադարանային գործի ոլորտում Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազորությունները

1. Հայաստանի Հանրապետության Կառավարությունը՝
 - 1) ստեղծում, լուծարում և վերակազմակերպում է պետական գրադարանները,
 - 2) ձևավորում է գրադարանային գործի ոլորտում պետական քաղաքականությունը,
 - 3) սահմանում է ազգային գրադարանային հավաքածուների արտակարգ իրավիճակում տարհանման և պաշտպանության կարգը,
 - 4) սահմանում է ազգային գրադարանային հավաքածուի հաշվառման, պահպանության, վերականգնման և օգտագործման կարգը,
 - 5) սահմանում է փաստաթղթերը արժևորելու, ազգային գրադարանային հավաքածուի կազմում ընդգրկելու կարգը և հաստատում է ազգային գրադարանային հավաքածուի գրացուցակը,
 - 6) սահմանում է գրադարանների ոլորտում կադրերի պատրաստման և վերապատրաստման պետական քաղաքականության,
 - 7) սահմանում է հանրային գրադարանների հավատարմագրման կարգը և հաստատում վկայականի ձևը:
 - 8) հաստատում է գրադարանային խորհրդի աշխատակարգը և կազմը,
 - 9) սահմանում է Հայաստանի Հանրապետության գրադարանների միասնական մատենագիտական համահավաք գրացուցակի ստեղծման կարգը:
 - 10) սահմանում է հայատառ գրադարանային հավաքածուի թվանշանային տարբերակը (թվանշանային գրադարանը), կազմակերպման և համակարգման կարգը,
 - 11) սահմանում է ազգային գրադարանային հավաքածուում ընդգրկած գրադարանների կամ ֆիզիկական անձանց սեփականությունը հանդիսացող ՝ գրադարանային փաստաթղթերի և (կամ) հավաքածուների պահպանության ծախսերի մասնակի փոխհատուցման կարգը:

Հոդված 13. Գրադարանային գործի ոլորտում Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից լիազորված պետական մարմնի լիազորությունները

1. Լիազորված պետական մարմինը՝
 - 1) ապահովում է ոլորտի զարգացման պետական քաղաքականությունը,

2) սահմանում է գրադարանային փաստաթղթերի հաշվառման, պահպանման, վերականգնման ու ամրակայման (կոնսերվացման) կարգը,

3) հաստատում է գրադարանների հավաքածուների հաշվառման գլխավոր մատյանի վարման կարգը,

4) սահմանում է գրադարանային տեղեկատվական շտեմարանում գրադարանների հավաքածուների ընդգրկման կարգը,

5) ապահովում է արտակարգ իրավիճակներում գրադարանային հավաքածուի տարհանումը, ամբողջականությունը և անվտանգությունը,

6) ընդունում է որոշում պետական գրադարանի գործող հավաքածուի կազմից նյութական կրիչների օտարման կամ պահպանության տեղի փոփոխման վերաբերյալ,

7) վերահսկում է պետական գրադարանային հավաքածուի պահպանությունը և օգտագործումը,

8) ապահովում է գրադարանների գործունեության վերաբերյալ վարչական վիճակագրական տվյալների մասնագիտական վերլուծությունը, ամփոփումը և հրատարակումը,

9) աջակցում է սոցիալապես առավել խոցելի խմբերի (երեխաներ, հաշմանդամներ, կենսաթոշակային տարիքի մարդիկ, փախստականներ, անաշխատունակներ, գյուղական՝ /հեռավոր և սահմանամերձ բնակավայրերի բնակչություն/ գրադարանային սպասարկման զարգացմանը,

10) աջակցում է գրադարանային կադրերի վերապատրաստման, որակավորման բարձրացման համակարգի զարգացման ծրագրերի մշակմանը և դրանց իրականացմանը,

11) սահմանում է գրադարանային աշխատողների մասնագիտական որակավորման չափանիշները,

12) սահմանում է հանրային գրադարանների կողմից մատուցվող ծառայությունների ցանկը:

13) սահմանում է Հայաստանի ազգային գրադարանի կողմից միջգրադարանային գրքափոխանակության հավաքածի ձևավորման և օգտագործման կարգը:

Հոդված 14. Գրադարանային գործի ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները

1. Գրադարանային գործի ոլորտում տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են <<Տեղական ինքնակառավարման մարմինների մասին>> և <<Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված լիազորությունները:

Հոդված 15. Գրադարանների խորհրդի լիազորությունները

1. Գրադարանների խորհրդի կազմում ընդգրկվում են ազգային և պետական նշանակության, մարզային ու համայնքային գրադարանների, գրադարանային աշխատողների, հասարակական կազմակերպությունների, միությունների և ասոցիացիաների ներկայացուցիչներ, գիտնականներ ու մասնագետներ:

2. Գրադարանների խորհուրդը գրադարանների ռազմավարական զարգացման, գիտական ծրագրերի, դրանց ֆինանսավորման, բյուջետային միջոցների բաշխման հարցերի վերաբերյալ իր առաջարկությունները ներկայացնում է պետական լիազորված մարմնին:

3. Գրադարանների խորհրդի աշխատակարգը և կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը լիազորված պետական մարմնի ներկայացմամբ՝ 3 տարի ժամկետով:

ԳԼՈՒԽ 5.

ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 16. Գրադարանների իրավունքները

1. Գրադարաններն իրավունք ունեն`
 - 1) իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ պայմանագիր կնքելիս սահմանել գրադարանային հավաքածուի օգտագործման պայմանները,
 - 2) ինքնուրույն որոշել իրենց գործունեության բովանդակությունը, ուղղություններն ու ձևերը` գրադարանի կանոնադրությամբ սահմանված նպատակներին և խնդիրներին համապատասխան,
 - 3) հիմնադրի հետ համաձայնեցնելով` հաստատել գրադարանից օգտվելու կանոնները,
 - 4) պահանջել գրադարաններին պատճառած վնասի փոխհատուցման օրենքով սահմանված կարգով,
 - 5) առաջարկել գրադարանների կողմից մատուցվող ծառայությունների ցանկի ընդլայնում` լիազորված պետական մարմնի կողմից հաստատված գրադարանային ծառայություններին ցանկում,
 - 6) ստեղծել գրադարանային միավորումներ` գործող օրենսդրությամբ սահմանված կարգով,
 - 7) մասնակցել դրամաշնորհային կամ այլ մրցության ծրագրերին գրադարանային գործի զարգացման նպատակով,
 - 8) համագործակցել օտարերկրյա պետությունների գրադարանների և այլ կազմակերպությունների հետ, անդամակցել միջազգային կազմակերպություններին, մասնակցել միջազգային գրադարանային ծրագրերի իրականացմանը,
 - 9) ինքնուրույն որոշել հավաքածուների համալրման աղբյուրները,
 - 10) գրադարանային հավաքածուներից դուրս գրել և օտարել նյութական կրիչներ, բացառությամբ ազգային գրադարանային հավաքածուի կազմում ընդգրկվածների, համաձայնեցնելով հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան;

Հոդված 17. Գրադարանների պարտականությունները

1. Գրադարանները պարտավոր են`

- 1) իրենց գործունեության իրականացնել գործող օրենսդրությանը, սույն օրենքին, գրադարանի կանոնադրությանը, գրադարանից օգտվելու կանոններին` համապատասխան,
- 2) իրենց գործունեություն մասին հաշվետվություններ ներկայացնել հիմնադրին կամ լիազորված պետական մարմնին և ազգային վիճակագրական ծառայությանը` գործող օրենսդրությանը համապատասխան,
- 3) գրադարանից օգտվողների պահանջին համապատասխան, տրամադրել տեղեկույթ իրենց գործունեության, հավաքածուների օգտագործման և համալրման վերաբերյալ,
- 4) իրականացնել գրադարանային հավաքածուների համալրումը, հաշվառումը, պահպանությունը, վերականգնումը` լիազորված պետական մարմնի սահմանած կարգով,
- 5) պահպանել գրադարանից օգտվողի հարցումների և օգտագործած տեղեկույթի գաղտնիությունը` որպես նրա անձնական տեղեկույթ` բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի,
- 6) իրականացնել ազգային գրադարանային հավաքածուի հաշվառումը, պահպանությունը, վերականգնումը և օգտագործումը ՀՀ կառավարության սահմանած կարգով,
- 7) իրազեկել ֆիզիկական և իրավաբանական անձանց գրադարանի ծառայություններից օգտվելու կանոնների մասին:

ԳԼՈՒԽ 6.

ԳՐԱԴԱՐԱՆԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 18. Գրադարանային ծառայություններից օգտվելու իրավունքը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում յուրաքանչյուր ոք ունի գրադարանային ծառայություններից օգտվելու իրավունք՝ անկախ սեռից, ազգությունից, տարիքից, կրթությունից, սոցիալական վիճակից, քաղաքացիական համոզմունքներից, դավանանքից:

2. Քաղաքացիների գրադարանային ծառայություններից օգտվելու իրավունքը ապահովվում է՝

1) գրադարանների համակարգի միջոցով, գրադարանների տեսակների բազմազանությամբ

2) գրադարանների զարգացման գործում պետական հոգածությամբ՝ անկախ նրանց կազմակերպական-իրավական տեսակից, սեփականության ձևից, բնույթից և գործունեության ծավալից:

Հոդված 19. Գրադարանի ծառայություններից օգտվողների իրավունքները

1. Գրադարանի ծառայությունից օգտվողները իրավունք ունեն՝

1) օգտվել գրադարանի հավաքածուից, սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված կարգին և գրադարանից օգտվելու կանոններին համապատասխան (բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի),

2) օգտվել միջգրադարանային բաժնույթի ծառայություններից,

3) անվճար ստանալ տեղեկույթ գրադարանային հավաքածուներում ընդգրկված պահանջվող փաստաթղթի վերաբերյալ,

4) օգտվել գրադարանի ընտրության և մատչելիության իրավունքից իր պահանջմունքներին և հետաքրքրություններին համապատասխան,

5) ֆիզիկական սահմանափակումներ ունեցող անձինք օգտվել գրադարանային ծառայություններից համապատասխան սպասարկման այլ միջոցներով

Հոդված 20. Գրադարանի ծառայությունից օգտվողների պարտականությունները

1. Գրադարանի ծառայությունից օգտվողները պարտավոր են պահպանել գրադարանի ծառայություններից և գրադարանային հավաքածուից օգտվելու կանոնները:

2. Գրադարանի հավաքածուին նյութական վնաս պատճառելու և գրադարանային հավաքածուներից օգտվելու կանոնները խախտելու դեպքում գրադարանի ծառայությունից օգտվողը կամավոր վերականգնում է վնասը, կամ փոխհատուցում նյութական կրիչի արժեքը շուկայական արժեքի տասնապատիկի չափով, կամ կրում պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 7.

ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 21. Գրադարանների ֆինանսավորումը

1. Պետական գրադարանների ֆինանսավորումը իրականացվում է պետական բյուջեի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

2. Համայնքային գրադարանների ֆինանսավորումը իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

3. Պետությունն աջակցում է հանրային գրադարանների ցանցի ձևավորման և զարգացման գործընթացներին:

4. Ֆիզիկական սահմանափակում ունեցող անձանց գրադարանային տեղեկատվական սպասարկումը իրականացվում է նպատակային ֆինանսավորման պետական ծրագրերով:

5. Գրադարանների կամ ֆիզիկական անձանց սեփականությունը հանդիսացող ազգային գրադարանային հավաքածուում ընդգրկած գրադարանային փաստաթղթերի և (կամ) հավաքածուների պահպանության ծախսերի մասնակի փոխհատուցման նպատակով տրամադրվում է պետական աջակցություն՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության սահմանած կարգով:

ԳԼՈՒԽ 8.

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՒՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հոդված 22. Պատասխանատվությունը գրադարանների և գրադարանային գործի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը խախտելու համար

Սույն օրենքի պահանջները խախտող իրավաբանական և ֆիզիկական անձինք պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ 9.

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 23. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող երեսուներորդ օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ
<<ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ
<<ԳՐԱՂԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՂԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ>> ՀՀ ՕՐԵՆՔԻ
ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առաջարկության /փոփոխության, լրացման/ հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը /փոփոխությունը, լրացումը/	Առաջարկությունը /փոփոխությունը, լրացումը/	Առաջարկության վերաբերյալ հեղինակի /հիմնական գեկուցողի/ եզրակացությունը
ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան	1-ին հոդված	Կարգավորման առարկաների թվում նշել նաև գրադարանային գործի զարգացման իրավական հիմքերի ապահովման խնդիրը:	Ընդունվել է: Խմբագրված է:
	2-րդ հոդվածի վերնագիր	Վերնագրում <<իրավական ակտերը>> արտահայտությունը փոխել <<օրենսդրությունը>. բառով:	Չի ընդունվել <<իրավական ակտերը>> ավելի լայն ընդգրկում ունեն:
	4-րդ հոդվածի վերնագիր	Վերնագրում <<օգտագործվող>> բառը փոխել <<գործածվող>> բառով	Չի ընդունվել, քանի որ նշված բառերը հոմանիշներ են, և իրավական ակտերում գործածելի է <<օգտագործվող>> բառը:
	4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	Շարադրել տեղեկատվական, մշակութային, գիտական և կրթական գործունեություն	Ընդունվել է: Խմբագրված է:
	4-րդ հոդված	Սահմանումների մեջ պահպանել հետևյալ հաջորդականությունը՝ 1) գրադարան, 2) գրադարանային գործ, 3) Հայաստանի ազգային գրադարան	Ընդունվել է: Խմբագրված է:
	4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	Ներառել կամ նշել կամավորության սկզբունքը՝ չբացառելով այն հանգամանքը, որ որոշ գրադարաններ համակարգի մաս կազմելու ցանկություն չունենան:	Ընդունվել է: Խմբագրված է:
	4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	Կետի սկիզբը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ գրադարանային գործ՝ տեղեկատվական, մշակութային և կրթական ոլորտ, որը	Ընդունվել է: Խմբագրված է:
	4-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետ	Գրադարանների գործերով խորհուրդ-ը խմբագրել՝ գրադարանների խորհուրդ ձևակերպումով;	Ընդունվել է: Խմբագրված է նաև 15- րդ հոդվածն ամբողջությամբ:
	6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	բ/ կետից հանել <<համալսարանական և դպրոցական>> արտահայտությունները	Ընդունվել է: Խմբագրված է:
	6-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	գ/ կետում ավելացնել << միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից հիմնադրված>> արտահայտությունը	Ընդունվել է: Խմբագրված է:
	8-րդ հոդվածի 5-րդ մաս	<<Հիմնադրի որոշման համաձայն>> բառերը փոխել <<կանոնադրությամբ նախատեսված >> արտահայտությամբ	Չի ընդունվել: Հիմնադիրն է որոշում, ինչը ամրագրվում է կանոնադրությամբ

	8-րդ հոդված	Ավելացնել նոր կետ հետևյալ բովանդակությամբ՝ Հանրային գրադարանի կարգավիճակի մերժումը, դադարեցումը /կասեցումը/ ենթակա է բողոքարկման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:	Ընդունվել է մասնակի: Խմբագրված է:
	8-րդ հոդվածի 6-րդ մասի	<<Կառավարության թույլտվությամբ >> արտահայտությունը փոխարինել <<Կառավարության որոշմամբ>>:	Ընդունվել է: Ամբողջությամբ խմբագրված է:
	9-րդ հոդվածի 1-ին մասում	Սկզբից ավելացնել ՝ <<Համաշխարհային և ազգային մշակութային ժառանգության բացառիկ կենտրոն է, որը>>	Ընդունվել է: Խմբագրված է 4-րդ հոդվածի 3-րդ կետում:
	9-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետ	<<գիտահետազոտական>> բառից հետո ավելացնել <<տպագիր արտադրանքի վերականգնման.. արտահայտությունը:	Ընդունվել է: Խմբագրված է 9-րդ հոդվածի 1-ին կետում:
	9-րդ հոդված	Ավելացնել նոր կետ հետևյալ բովանդակությամբ՝ <<Հայաստանի Հանրապետությունում թվանշանային գրադարանի կազմակերպիչն է ու համակարգողը>>	Ընդունվել է մասնակի: Խմբագրված է՝ 9-րդ հոդված 11-րդ կետ:
	9-րդ հոդված	Ավելացնել նոր կետ հետևյալ բովանդակությամբ՝ <<Որպես համազգային և համապետական մշակութային բացառիկ գործունեություն իրականացնող և ազգային կարգավիճակ ունեցող մշակութային կազմակերպություն Հայաստանի ազգային գրադարանի ֆինանսավորումը ՀՀ բյուջեում արտահայտվում է առանձին տողով>> :	Չի ընդունվել, <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, քանի որ սույն դրույթը ամրագրված է <<Մշակութային օրենսդրության հիմունքների մասին>> ՀՀ օրենքի 26.1.-ին հոդվածի 4-րդ մասում:
	13-րդ հոդված	Ավելացնել նոր մասեր հետևյալ բովանդակությամբ՝ հաստատում է Գրադարանների խորհրդի կանոնադրությունը	Ընդունվել է: Խմբագրված է, <<աշխատակարգ>> 12-րդ և 15-րդ հոդվածներ:
	14-րդ հոդված 1-ին մասում	Ավելացնել հետևյալ բովանդակությամբ նոր մաս՝ <<տարեկան բյուջեում ամրագրելով 3% հատկացում>>	Չի ընդունվել, քանի որ <<ՀՀ բյուջետային համակարգի մասին>> << օրենքով հստակ սահմանված են ծնափորման սկզբունքները:
	17-րդ հոդվածի 1-ին մասը	Չի վերաբերում հոդվածի վերնագրին՝ վերաշարադրել ՝ դարձնելով պարտականություն (գործառույթի հոդվածի է առնչվում)	Ընդունվել է: Խմբագրված է:
	17-րդ հոդված	2-րդ և 8-րդ մասերը կրկնում են, միավորել	Ընդունվել է: Խմբագրված է:
Աժ պատգամավոր Մարգարետունի Մանուկյան	4-րդ հոդված 1-ին մասի 3-րդ կետ	Ավելացնել <<պահպանումը>> բառը <<ծնավորումը և մշակումը>> բառակապակցությունից հետո	Ընդունվել է: Խմբագրված է:
	4-րդ հոդված 1-ին մասի 4-րդ կետ	Հանել <<ծեռագրեր>> բառը	Ընդունվել է: Խմբագրված է:
	4-րդ հոդվածի 1-ին մասի	<<8) գրադարանային հավաքածու՝ տեղեկատվական	Ընդունվել է: Խմբագրված է:

8-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ	նյութական տարբեր կրիչների ամբողջություն, >> :	
4-րդ հոդված 1-ին մասի 18-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ	<<18) գրադարանի տեղեկատու-որոնողական համակարգ՝ տեղեկույթի ավտոմատացված տվյալների շտեմարան՝ տեղեկատու և մատենագիտական հրատարակությունների քարտային և էլեկտրոնային գրացուցակ >>	Ընդունվել է: Խմբագրված է:
4-րդ հոդված 1-ին մասի 19-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ	<<19) ազգային մատենագիտություն՝ գրադարանային հավաքածուի տվյալների համապարփակ ամբողջություն,>>	Ընդունվել է: Խմբագրված է:
4-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ	<<21) միջգրադարանային բաժնույթ՝ գրադարանային ծառայության տեսակ՝ հիմնված գրադարանային հավաքածուների փոխօգտագործման վրա: >>	Ընդունվել է: Խմբագրված է:
7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	<<հավաքածուի>> բառից հետո ավելացնել << գրացուցակ>> բառը	Ընդունվել է: Խմբագրված է:
7-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ	<< 8) օգտվում է միջգրադարանային բաժնույթային համակարգից:>>	Ընդունվել է: Խմբագրված է՝ 7-րդ կետ:
9-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետ	<<կազմակերպում>> բառից հետո ավելացնել<<և իրականացնում>>	Ընդունվել է: Խմբագրված է՝ 10-րդ կետ:
11-րդ հոդվածի 10-րդ մասի 3-րդ կետ	Հանել <<անձեռնմխելի հավաքածուներում գտնվելու, ինչպես նաև>> բառերը	Ընդունվել է: Խմբագրված է:
12-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետից	Հանել << աշխատանքի վարձատրության սկզբունքները>> բառերը	Ընդունվել է: Խմբագրված է՝ 6-րդ կետ:
12-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը	Հանել	Ընդունվել է: Խմբագրված է:
19-րդ և 20-րդ հոդված վերնագրերը և տեքստը	Խմբագրել <<Գրադարանի ծառայությունից օգտվողների >> բառերով	Ընդունվել է: Խմբագրված է:
19-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ	<<4) օգտվել գրադարանի ընտրության և մատչելիության իրավունքից իր պահանջմունքներին և հետաքրքրություններին համապատասխան, >>	Ընդունվել է: Խմբագրված է:
19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը իր ենթակետերով, և 6-րդ, 8-րդ, 9-րդ կետերը	Հանել	Ընդունվել է: Խմբագրված է:
20-րդ հոդվածի 2-րդ մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ	<<2. Գրադարանի հավաքածուին նյութական վնաս պատճառելու և գրադարանային հավաքածուներից օգտվելու կանոնները խախտելու դեպքում գրադարանի ծառայությունից օգտվողը կամավոր վերականգնում է	Ընդունվել է: Խմբագրված է:

		վնասը կամ փոխհատուցում նյութական կրիչի արժեքը շուկայական արժեքի տասնապատիկի չափով, կամ կրում պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով: >>	
ՀՀ կառավարություն	4-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ	Հայաստանի Հանրապետության գրադարանային հավաքածու՝ գրադարանային համակարգի մեջ միավորված գրադարանների հավաքածուներ,	Ընդունվել է: Խմբագրված է:
	4-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ	ազգային գրադարանային հավաքածու՝ ՀՀ գրադարանային հավաքածուի բաղկացուցիչ մաս, գրավոր հուշարձաններ և պարտադիր օրինակներ, որն ունի առանձնահատուկ պատմական, գիտական, մշակութային նշանակություն և նախատեսված է հանրային օգտագործման ու մշտապես պահպանվում է պետության կողմից,	Ընդունվել է: Խմբագրված է:
	4-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ	<<9) հանրային գրադարան՝ սույն օրենքով սահմանված կարգով կարգավիճակ ստացած գրադարան, որը ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրում է գրադարանային հավաքածուներն ու ծառայությունները առանց սահմանափակումների, ինչպես նաև իրականացնում է սույն օրենքի 7-րդ և 8-րդ հոդվածներով սահմանված գործառնությունները>> :	Ընդունվել է: Խմբագրված է:
	4-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ	<<12) համահավաք գրացուցակ՝ մատենագիտական գրառումների ամբողջություն, որը ներառում է գրադարանային հավաքածուների կազմը և բովանդակությունը:>>	Ընդունվել է: Խմբագրված է:
	4-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ	<<13) տեղեկատվական պաշարներ՝ գրադարաններում, արխիվներում, հավաքված փաստաթղթերի ամբողջություն,>>	Ընդունվել է: Խմբագրված է:
	8-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետ	Հանել	Ընդունվել է: Խմբագրված է:
	8-րդ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետ	<<ապահովում է>> բառից հետո խմբագրել <<սպասարկման այլ միջոցներ ֆիզիկական սահմանափակումներ ունեցող անձանց համար>>	Ընդունվել է: Խմբագրված է:

	8-րդ հոդվածի 2-րդ կետ 6-րդ ենակետը	Հանել	Ընդունվել է: Խմբագրված է:
	8-րդ հոդվածի 6-րդ կետ խմբագրել հետևյալ բովանդակությամբ	<<Պետական և համայնքային հանրային գրադարանների շենքերը և զբաղեցրած տարածքները հասարակական կամ պետական կարիքների համար կարող են օտարվել միայն բացառիկ դեպքերում՝ օրենքով:>>	Ընդունվել է: Խմբագրված է:
	9-րդ հոդվածի լրացնել նոր 1-ի մասով խմբագրել հետևյալ բովանդակությամբ	<<1. Հայաստանի ազգային գրադարանը հանրային գրադարան է: Հայաստանի Հանրապետությունում գրադարանագիտության, մատենագիտության, գրքագիտության գիտահետազոտական և տպագիր արտադրանքի վերականգնման կենտրոնն է:>>	Ընդունվել է: Խմբագրված է:
	9-րդ հոդվածը լրացնել նոր 2-րդ մասով հետևյալ բովանդակությամբ	<<2. Հայաստանի ազգային գրադարանը ունի խորհրդակցական մարմին՝ գիտական խորհուրդ, որի գործառույթները սահմանվում են կանոնադրությամբ:>>	Ընդունվել է: Խմբագրված է:
	9-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ	<<1) հավաքում, ձևավորում, պահպանում է գրավոր ժառանգության պատմական հիշողությունը, ունի համապարփակ, լիակատար հայատառ և Հայաստանի մասին այլ լեզուներով գրադարանային հավաքածու, հայրենական և արտասահմանյան գրադարանային փաստաթղթերը, ինչպես նաև փաստաթղթերի պարտադիր օրինակը>>	Ընդունվել է: Խմբագրված է՝ 3-րդ մասի 1-ին կետ: Այսուհետ 2-րդ մասը դարձել է 3-րդ մաս:
	9-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ	<<2) իրականացնում է միջազգային միջգրադարանային բաժնույթի ծառայությունները և օժանդակում է գրադարաններին՝ կազմակերպելու այդ ծառայությունը>>	Ընդունվել է: Խմբագրված է:
	9-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ	<<3) իրականացնում է Հայաստանի Հանրապետության գրադարանային հավաքածուի մասին տեղեկույթի տարածում Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում և նրա սահմաններից դուրս,>>	Ընդունվել է: Խմբագրված է
	9-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ	<<4) իրականացնում է Հայաստանի Հանրապետության գրադարանների մատենագիտական գրացուցակների համակարգում և ձևավորում է միասնական մատենագիտական համահավաք գրացուցակ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով, >>	Ընդունվել է: Խմբագրված է
	9-րդ հոդվածի 3 -րդ մասի 7-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ	<<7) իրականացնում է հայ տպագիր գրքի, մամուլի և հայագիտական հրապարակումների մատենագիտական ցանկերի կազմում, հրատարակում, փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակի պատրաստում և օգտվողներին տրամադրում «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով,>>	Ընդունվել է: Խմբագրված է:

9-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ	<<8) ապահովում է ֆիզիկապես մաշված, եզակի և (կամ) հազվագյուտ գրավոր հուշարձանների, գրադարանային փաստաթղթերի ամրակայումը և վերականգնումը, տպագիր արտադրանքի վերականգնման կենտրոնն է:>>	Ընդունվել է: Խմբագրված է:
9-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ	<<9) իրականացնում է վերահսկողություն Հայաստանի Հանրապետության տարածքում գրավոր հուշարձան համարվող գրադարանային փաստաթղթերի պահպանության և պաշտպանության նկատմամբ՝ անկախ նրանց սեփականության ձևից>>:	Ընդունվել է: Խմբագրված է:
9-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ	<< 10) ձևավորում է համապարփակ նշանակություն ունեցող միջգրադարանային գրքափոխանակության հավաքածու, որի ձևավորման և օգտագործման կարգը սահմանում է պետական լիազորված մարմինը>>:	Ընդունվել է: Խմբված է:
9-րդ հոդվածի 2-րդ մաս	Հանել<<ինչպես նաև նրա հավաքածուների>> բառերը	Ընդունվել է: Խմբագրված է:
3-րդ գլխի վերնագիրը խմբագրել հետևյալ բովանդակությամբ	ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ԶԵՎԱԿՈՐՈՒՄԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՈՒՄԸ, ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ	Ընդունվել է: Խմբագրված է:
10-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ	<<1.Ազգային գրադարանային հավաքածուի կազմում ընդգրկվում են գրավոր հուշարձանները, փաստաթղթի պարտադիր օրինակը և փորձաքննությամբ արժևորված փաստաթղթերը: Փաստաթղթերը արժևորելու, ազգային գրադարանային հավաքածուի կազմում ընդգրկելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:>>	Ընդունվել է: Խմբագրված է:

10-րդ հոդվածի 2.- րդ մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ	<<2. Ազգային գրադարանային հավաքածուի գրացուցակում կարող են ընդգրկվել իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականություն հանդիսացող գրավոր հուշարձանները սեփականատիրոջ գրավոր համաձայնությամբ՝ նրա և լիազորված պետական մարմնի միջև կնքված պայմանագրի հիման վրա: Գրացուցակը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:>>	Ընդունվել է: Խմբագրված է:
10-րդ հոդվածի 6-րդ մասից հանել	<<մաս կազմող գրավոր հուշարձաններ>> բառերը	Ընդունվել է: Խմբագրված է:
11-րդ հոդվածի 2-րդ կետի երկրորդ նխադասությունը խմբագրել հետևյալ բովանդակությամբ	<<Գրադարանի հավաքածուների հաշվառման, պահպանման, վերականգնման ու ամրակայման (կոնսերվացման) կանոնները և կարգը սահմանում է, ինչպես նաև գրադարանների հավաքածուների հաշվառման գլխավոր մատյանի վարման կարգը հաստատում է լիազոր պետական մարմինը:>>	Ընդունվել է: Խմբագրված է:
11-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ նախադասությունը սկսել	<<Գրադարաններին>> բառով	Ընդունվել է: Խմբագրված է:
11-րդ հոդվածի 5-րդ մասը վերջից հանել	<< լիազորված պետական մարմնի կողմից սահմանված կարգով>>, քանի որ նույն հոդվածի 2-րդ մասում այն ամրագրված է	Ընդունվել է: Խմբագրված է:
12-րդ հոդվածի 1-ին մաս	4-րդ և 6-րդ կետերը կրկնում են միացնել	Ընդունվել է: Խմբագրված է: 6-րդ ենթակետը հանված է
12-րդ հոդվածի 1-ին մաս	Ավելացնել նոր կետ հետևյալ բովանդակությամբ <<հաստատում է գրադարանային խորհրդի կանոնադրությունը և կազմը>>	Ընդունվել է: Խմբագրված է:
12-րդ հոդվածի 1-ին մաս	Ավելացնել նոր կետ հետևյալ բովանդակությամբ <<9) սահմանում է Հայաստանի Հանրապետության գրադարանների միասնական մատենագիտական համահավաք գրացուցակի ստեղծման կարգը:>>	Ընդունվել է: Խմբագրված է:
12-րդ հոդվածի 1-ին մաս	Ավելացնել նոր կետ հետևյալ բովանդակությամբ <<սահմանում է ազգային գրադարանային հավաքածուում ընդգրկված գրադարանների կամ ֆիզիկական անձանց սեփականությունը հանդիսացող՝ գրադարանային փաստաթղթերի և (կամ) հավաքածուների պահպանության ծախսերի մասնակի փոխհատուցման կարգը:>>	Ընդունվել է: Խմբագրված է:

	12-րդ հոդվածի 1-ին մաս	Ավելացնել նոր կետ հետևյալ բովանդակությամբ <<սահմանում է հայատառ գրադարանային հավաքածուի թվանշանային տարբերակը (թվանշանային գրադարանը), կազմակերպման և համակարգման կարգը,>>	Ընդունվել է: Խմբագրված է:
	13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը	Խմբագրել հետևյալ բովանդակությամբ << սահմանում է գրադարանային փաստաթղթերի հաշվառման, պահպանման, վերականգնման ու ամրակայման (կոնսերվացման) կարգը>>:	Ընդունվել է: Խմբագրված է:
	13-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը	Խմբագրել հետևյալ բովանդակությամբ << 6) ընդունում է որոշում պետական գրադարանի գործող հավաքածուի կազմից նյութական կրիչների օտարման կամ պահպանության ձևի փոփոխման վերաբերյալ,>>	Ընդունվել է: Խմբագրված է:
	13-րդ հոդվածի 1-ին մաս	Ավելացնել նոր կետ հետևյալ բովանդակությամբ << սահմանում է Հայաստանի ազգային գրադարանի կողմից միջգրադարանային գրքափոխանակության հավաքածի ձևավորման և օգտագործման կարգը,>>	Ընդունվել է: Խմբագրված է:
	14-րդ հոդվածը խմբագրել հետևյալ բովանդակությամբ	<<1. Գրադարանային գործի ոլորտում տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են <<Տեղական ինքնակառավարման մարմինների մասին>> և << Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և սահմանված լիազորությունները:>>	Ընդունվել է: Խմբագրված է:
	16-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը	Հանել, որովհետև սահմանափակումները սահմանված են սույն օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասով, իսկ ազգային գրադարանային հավաքածուի օգտագործման կարգը սահմանում է << կառավարությունը սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետով	Ընդունվել է: Խմբագրված է:
	16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը	Խմբագրել հետևյալ բովանդակությամբ <<4) պահանջել գրադարաններին պատճառած վնասի փոխհատուցման օրենքով սահմանված կարգով,>>	Ընդունվել է: Խմբագրված է:
	16-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը	Խմբագրել հետևյալ բովանդակությամբ <<5) առաջարկել գրադարանների կողմից մատուցվող ծառայությունների ցանկի ընդլայնում` լիազորված պետական մարմնի կողմից հաստատված գրադարանային ծառայությունների ցանկում,>>	Ընդունվել է: Խմբագրված է:
	16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը	Խմբագրել հետևյալ բովանդակությամբ <<մասնակցել դրամաշնորհային կամ այլ մրցութային ծրագրերին գրադարանային գործի զարգացման նպատակով,>>	Ընդունվել է: Խմբագրված է:
	16-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետը	Խմբագրել հետևյալ բովանդակությամբ <<համագործակցել օտարերկրյա պետությունների գրադարանների և այլ կազմակերպությունների հետ, անդամակցել միջազգային կազմակերպություններին, մասնակցել միջազգային գրադարանային ծրագրերի	Ընդունվել է: Խմբագրված է:

		իրականացմանը,>>	
16-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը	Խմբագրել հետևյալ բովանդակությամբ << գրադարանային հավաքածուներից դուրս գրել և օտարել նյութական կրիչներ, բացառությամբ ազգային գրադարանային հավաքածուի կազմում ընդգրկվածների, համաձայնեցնելով հիմնադիրի կամ լիազորված պետական մարմին հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան;>>		Ընդունվել է: Խմբագրված է:
16-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը	Հանել, քանի որ որպես աջակցություն սույն օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված է հանրային գրադարանի համար <<օգտվել գրադարանային հավաքածուի համալրման ծրագրից:>>		Ընդունվել է: Խմբագրված է:
17-րդ հոդվածում	Ավելացնել 1-ին մաս հետևյալ բովանդակությամբ << 1. Գրադարանները պարտավոր են`		Ընդունվել է: Խմբագրված է:
17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	Խմբագրել հետևյալ բովանդակությամբ <<գրադարանից օգտվողների պահանջին համապատասխան, տրամադրել տեղեկույթ իրենց գործունեության, հավաքածուների օգտագործման և համալրման վերաբերյալ:>>		Ընդունվել է: Խմբագրված է:
17-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ	Խմբագրել հետևյալ բովանդակությամբ. <<4) իրականացնել գրադարանային հավաքածուների հաշվառումը, համալրումը, պահպանությունը, վերականգնումը` լիազորված պետական մարմնի սահմանած կարգով,>>		Ընդունվել է: Խմբագրված է:
17-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ	Խմբագրել հետևյալ բովանդակությամբ. <<5) պահպանել գրադարանից օգտվողի հարցումների և օգտագործած տեղեկույթի գաղտնիությունը` որպես նրա անձնական տեղեկույթ` բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի,>>		Ընդունվել է: Խմբագրված է:
17-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ	Խմբագրել հետևյալ բովանդակությամբ. <<6) իրականացնել ազգային գրադարանային հավաքածուի հաշվառումը, պահպանությունը, վերականգնումը և օգտագործումը << կառավարության սահմանած կարգով,>>		Ընդունվել է: Խմբագրված է:
17-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ	Խմբագրել հետևյալ բովանդակությամբ. <<7) իրազեկել ֆիզիկական և իրավաբանական անձանց գրադարանի ծառայություններից օգտվելու կանոնների մասին>>:		Ընդունվել է: Խմբագրված է:
18-րդ հոդվածի 2-րդ մաս	Խմբագրել հետևյալ բովանդակությամբ <<2. Քաղաքացիների գրադարանային ծառայություններից օգտվելու իրավունքը ապահովվում է` 1) գրադարանների համակարգի միջոցով,		Ընդունվել է: Խմբագրված է:

		գրադարանների տեսակների բազմազանությամբ 2) գրադարանների զարգացման գործում պետական հոգածությամբ՝ անկախ նրանց կազմակերպական- իրավական տեսակից, սեփականության ձևից, բնույթից և գործունեության ծավալից:>>	
	19-րդ հոդվածի 1-ին մաս	Ավելացնել <<ծառայություններից>> բառը	Ընդունվել է: Խմբագրված է:
	19-րդ հոդվածի 1-ին մաս 1-ին կետ	Խմբագրել հետևյալ բովանդակությամբ <<1) օգտվել գրադարանի հավաքածուից, սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված կարգին և գրադարանից օգտվելու կանոններին համապատասխան (բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի),>>	Ընդունվել է: Խմբագրված է:
	21-րդ հոդվածի 5-րդ մաս	Խմբագրել հետևյալ բովանդակությամբ << Գրադարանների կամ ֆիզիկական անձանց սեփականությունը հանդիսացող ազգային գրադարանային հավաքածուում ընդգրկած գրադարանային փաստաթղթերի և (կամ) հավաքածուների պահպանության ծախսերի մասնակի փոխհատուցման նպատակով տրամադրվում է պետական աջակցություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:>>	Ընդունվել է: Խմբագրված է: